



«ԷՄ.ԹԻ.ՎԻ.»-Ի ԴԵՊՔԸ՝ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈՏՆԱԿՈՒՄԻՄԻ ՓՈՐՉ

Հինգշաբթի իրիկուն տեղի ունեցած դեպքը «ԷՄ.ԹԻ.ՎԻ.» պատկերասփիռի կայանի քաղաքական ծրագրերը եւ մարտի Դանեմի ներկայացուցած ծրագրի ընթացքին եւ անկէ տեղ, դարձաւ դատապարտումի նիւթ քաղաքական եւ տեղեկատուական շատ մը մարմիններու կողմէ: Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը խստօրէն դատապար-



տեղ եղած դեպքը եւ զայն համարեց օրինակ մը այլամերժութեան եւ իրենց կարծիքն տարբեր կարծիք չընդունելու վառ օրինակ: Ան դատական իշխանութենէն պահանջեց բանալ այս թղթածրարը եւ սահմանել յանցարարները ու պատժել զանոնք: Այս քայլը չկատարելու պարագային, կուսակցութիւնը զգուշացուց ապագային տեղի ունենալիք անլի վտանգաւոր դեպքեր:

Իր կարգին, Լիբանանի լրագրողներու արհեստակցական միութիւնը դատապարտեց «ԷՄ.ԹԻ.ՎԻ.» պատկերասփիռի կայանին մէջ տեղի ունեցած դեպքը ու կայանին վրայ կատարուած յարձակումը եւ զայն համարեց ոտնակոխումի փորձ խօսքի ազատութեան: Միութիւնը դատական իշխանութենէն պահանջեց քայլեր առնել՝ սահմանելու համար յանցարարները եւ զանոնք պատժելու համար: Հարկ է նշել, որ այս դեպքին ընթացքին ինկած էր քանի մը վիրաւոր:

ԲԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Լիբանանեան բանակի լրատու աղբիւրը յայտարարեց, որ բանակի ջոկատ մը երբ կը փորձեր ձերաբակալել հետախուզուած անձ մը Լեռնալիբանանի շրջանին մէջ, ան



կրակ բացաւ զինուորներուն ուղղութեամբ եւ մէկ զինուոր վիրաւորուեցաւ: Բանակը հակադարձեց եւ հետախուզուած անձը սպաննուեցաւ: Ան կը հետախուզուէր 31 ամբաստանագիրի հիման վրայ, որոնց մէջ՝ ոճիր եւ թմրեցուցիչի վաճառք:

ՆԱԲԱՆԱԳԻՍԻ ԶՈՐԵՐՈՒ ԸՆՏԱՆՔՆԵՐՈՒ ԿՈՉԸ

Պէրյուրի նաւահանգիստի պայթումի զոհերու ընտանիքները հրապարակեցին կոչ մը, որուն մէջ կը պահանջուի արդարադատութեան գործադրութիւնը եւ թոյլ տալ դատական իշխանութեան, որ հասնի այդ նպատակին, հարցաքննելով այն անձերը, որոնք կապ ունին այս հարցին հետ, անկախ իրենց վարած պաշտօններէն: Հրապարակումին մէջ կար դատապարտում նախկին նախագահին, խորհրդարանի նախագահին եւ կարգ մը քաղաքական գործիչներու հասցէին, որոնք դեմ կեցան արդարադատութեան գործադրութեան:

ՊԱՊԸ ՊԱՐՐԵՅՆԻ ՄԷՋ

Հռոմի Ֆրանչիսքոս պապը սկսաւ իր հովուական այցելութիւնը Ճոզի երկիրներէն Պահրէյնին: Ան յայտարարեց, թէ քրիստոնէական այս փոքր օճախը ցոյց կու տայ պետ-



քը միութեան եւ հաւատքի մէջ մասնակցութեան: Սրբազան քահանայապետը անցուց, որ «չենք կրնար վկայները ըլլալ սիրոյ Աստուծոյ, եթէ չմիանանք ըստ իր կամքին եւ ընդարձակենք մեր փոխադարձ շահերը»:

ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԼՈՒԾԵԼՈՒ

Միացեալ Նահանգներու Ազգային ապահովութեան խորհուրդի ռազմավարական յարաբերութեան համակարգող ճոն Քիրպի յայտարարեց, թէ ուղբանական ուժեր



կը յառաջանան դէպի հարաւ: Ան անցուց, որ ԱՄՆ պատրաստ է երկխօսութեամբ լուծելու տարակարծութիւնները Հիւսիսային Զորեայի վարչակարգին հետ, սակայն նաեւ պատրաստ է դիմագրաւելու ամեն սպառնալիք:

ՉԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍ Ե

Չինաստանի Պաշտպանութեան նախարարութեան խօսնակը յայտարարեց, թէ բանակը կը պատրաստուի դիմագրաւելու համար ամեն վտանգ եւ դեմ է Թայուանի



բաժանումին: Ան անցուց, որ Թայուանի հարցը չինական ներքին հարց է եւ անընդունելի է ամեն արտաքին միջամտութիւն այդ հարցին մէջ: Նախապէս, Չինաստանի նախագահ Շի Ճին Փինկ յայտարարած էր, թէ Չինաստան կրցաւ իր ազդեցութիւնը տարածել Հոնկ Զոնկի վրայ եւ խոչը տեղի պիտի ունենայ Թայուանի պարագային:

ՇՈՒՆ ՄԵՐԾԵՏ

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլց մերժած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի առաջարկը՝ միասնաբար այցելելու համար Չինաստան, ցոյց տալու համար Եւրոպական միութեան միասնակամութիւնը: Շոլցի այցելութիւնը տեղի ունեցաւ Գերմանիոյ թոյլտուութենէն տեղ, որ



չինական պետական ընկերութիւն մը գնէ Համպուրկի նաւահանգիստի բաժնետոմսերուն մէկ մասը, հակառակ Եւրոպական միութեան կարգ մը անդամներու եւ ԱՄՆ-ի մերժումին:

Ըստ վերլուծողներու, Գերմանիոյ վարչապետի այցելութեան հիմնական պատճառը երկրի տնտեսական ժխտական ցուցանիշներն են եւ ապագային տնտեսական անկումի սպառնալիքը:

ՄԻՋԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱՐԻԸ

Իսրայելի պաշտպանութեան նախարար Պենի Կանց յայտարարեց, թէ Իսրայելի խորհրդարանի վերջին ընտրութիւնները ցոյց տուին, որ երկիրը կը տառապի բաժանումէ եւ ծայրայեղութենէ: Ըստ Կանցի, երկրին պետք է ներկայիս միջին հոսանք մը, որ շրջանցէ բոլոր բաժանումները:



Նոյեմբեր 1-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն, Կանցի մաս կազմած հոսանքը պարտութիւն կրած էր նախկին վարչապետ Պենիամին Եթան-Խահուի հոսանքին դիմաց:

ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ ՍՊԱՆՆՈՒԾ

Իրանեան «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը յայտարարեց, թէ երկու ոստիկաններ սպաննուած են զինեալներու կողմէ Թեհրանի արեւմուտքը գտնուող Էլպուրու նահանգին մէջ: Տասը այլ ոստիկաններ վիրաւորուած են:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՌՈՒԾՈՂԱԿԱՆ Է

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի խօսակա Իպրահիմ Քալըն հարցազրոյցի մը ընթացքին անդրադարձած է Հայաստան-Թուրքիա յարաբերութեան եւ յայ-



տարարած է, թէ Հայաստանի հետ տարակարծութեան ամենամեծ հարցը Արցախի հարցն էր եւ այդ արդէն լուծուած է, ըստ Քալընի: Ան անցուց, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ վերջին ժողովներէն տեղ, Հայաստանի կառուցողական դիրքը յստակ է եւ Թուրքիա գիտէ այդ մէկը:

ՄԻՋԻՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Հայաստան ստացած է Ռուսիա-Հայաստան-Ատրպէյճան միջխորհրդարանական բանակցութեան առաջարկ: Առաջարկը կատարած է Ռուսիոյ Դաշնութեան Տումայի նախագահ Վիաչեսլաւ Վոլոտինը: Հայաստանի Ազգային ժողովի նախագահը դրական պատասխան տուած է, սակայն տակաւին յայտնի չէ այդ բանակցութեան ձեւը: Սակայն Հայաստան կը նախընտրէ անլի բարձր մակարդակի վրայ կայացուած որոշումներու գործադրութիւնը, անցնելէ առաջ այլ մարմիններու միջեւ բանակցութեան:

ՌՈՒՔԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ՝ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութեանն որոշած է Արտաքին Բեկարեանը պաշտօնազրկել պետական նախարարի պաշտօնէն: Պետական նախարար նշանակուած է Ռուբէն Վարդանեանը: Պետական նախարարը պիտի համակարգէ առողջապահութեան, արդարադատութեան, արտաքին գործերու, գի-



ղատնտեսութեան, կրթութեան, մարմնակրթութեան, ընկերային զարգացումի, տարածքային կառավարման, ենթակառուցողի, քաղաքաշինութեան, տնտեսութեան եւ էլեմուտքի նախարարութիւններու գործունեութիւնը:

ԻՄՐԱՆ ԽԱՆ ԿՄԱՐԱՍԱՆԸ

Փաքիստանի նախկին վարչապետ Իմրան Խան ամբաստանեց ներկայ վարչապետը ծրագրելու իր մահափորձը: Ան յայտարարեց, թէ քանի մը օր առաջ ինք տեղեկութիւն ստացաւ, թէ իր դեմ մահափորձ մը կը պատրաստուի: Ան




իր համակիրներուն կոչ ուղղեց բողոքելու ներկայ, ներածած վարչակարգին դեմ: Ան անցուց, որ պիտի շարունակէ իր երթը դէպի Իսլամապատ, ապաքինելէ տեղ: Խանի կուսակցութիւնը կը պահանջէ կատարել խորհրդարանական արտակարգ ընտրութիւններ, երկիրը ներկայ քաղաքական անկայուն վիճակէն դուրս հանելու համար:

ՌՈՒՍԻԱ ԿԸ ՍՊԱՆՆԱՅ

Ամերիկեան «Պլումպըրկ» լրատուական կայանը յայտարարեց, թէ Ռուսիա սպառնացած է Իսրայելի դեմ քայլեր առնել, եթէ վերջինս Ուքրանիոյ տրամադրէ հակաօդային համակարգ: Իսրայել վերջերս սկսած է մտածել գէնը ուղարկել Ուքրանիա, նկատի առնելով որ Իրան կ'օժանդակէ Ռուսիոյ, վտանգելով Իսրայելի պաշտպանութեան համակարգը: Հարկ է նշել, որ Ռուսիոյ Դաշնութեան Ապահովութեան խորհուրդի փոխնախագահ Տմիթրի Մետվետեւ զգուշացուցած էր Իսրայելը՝ Ուքրանիոյ գէնը վաճառելու հետեւանքներէն:

ՌՈՒՔԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ.
«ՄԵՆԲ ԱՐՃԱԽԸ ՄՏԱՅԱԾ
ԵՆԲ ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԵՆ ԵՒ
ՊԱՐՏԱՌՐ ԵՆԲ ՓՈԽԱՆՅԵԼ
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՅԱԶՈՐԳ
ՄԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՄ»

Արցախի Յանտարաբանության նախագահ Արայիկ Յարուբինյան կառավարության անդամներուն ու պետական նախարարի աշխատակազմի աշխատակիցներուն ներկայացուցած է նորանշանակ պետական նախարար Ռուբեն Վարդանեանը:



Իր խօսքին մէջ Արցախի նախագահը շնորհակալութիւն յայտնած է Արտակ Բեկլարեանին կատարած անձնուէր աշխատանքին համար եւ վստահութիւն յայտնած է, որ ան ապագային եւս իր ամբողջ ներուժը, գիտելիքներն ու փորձը պիտի ծառայեցնէ Արցախի զարգացման ու մեր ժողովուրդի բարորութեան:

Ներկայացնելով նոր պետական նախարարը՝ Արայիկ Յարուբինյան նշած է, որ ուրախ է, որ Ռուբեն Վարդանեանը ընդունած է իր՝ այդ պաշտօնը ստանձնելու առաջարկը, քանի որ ան անկէ քան 20 տարի է Արցախի հետ է, իսկ ապատեղացի օրերուն կը գտնուէր Արցախի կողքին ու անկէ յետոյ սկսած է «Օրօրան Արցախին» ծրագրին միջոցով անկէ աշխոյժ ընկերային ու բարեգործական ծրագիրներ իրականացնել Արցախի մէջ: Նախագահին խօսքով՝ Ռուբեն Վարդանեանի նուիրումն ու շնորհակալութիւնը Արցախի համար հիմա չափազանց կարեւոր են: Իսկ անոր փորձը, հնարաւորութիւնները, արժէքաւոր կապերը ամբողջ աշխարհին հետ այս փուլին երկրին պարզապէս անհրաժեշտ են:

«Ամենակարեւորը, որ ան կը հաւատայ Արցախի ապագային: Ան համոզուած է, որ Արցախի մէջ այժմ կ'որոշուի ամբողջ հայ ժողովուրդի ապագան, եւ իր քայլով հաստատեց, որ իրեն համար անկէ կարեւոր բան չկայ, քան Արցախ գալիս ու այստեղ մեզի հետ գտնուելը, մեր ճակատագիրը մեզի հետ կիսելը: Ան մեզի հետ է, եւ այդպիսի մարդոց պէտք է առաւելագոյն աջակցիլ հայրենիքին ծառայելու հարցով», ընդգծած է երկրին ղեկավարը:

Արայիկ Յարուբինյանը վստահեցուցած է նոր պետական նախարարին, որ ան պիտի ունենայ նախագահին, կառավարութեան, խորհրդարանին եւ Արցախի ամբողջ ժողովուրդին աջակցութիւնը:

«Դուք, մեզի հետ միասին, յաջողե՛լ բացի, այլ ճանապարհ չունիք: Յաջողելու՝ յաւանքս, յաւանքս Արցախի ժողովուրդին, յաւանքս մեր պատմական հողին մէջ մեր ապրելու իրաւունքին, յաւանքս Արցախը հայկական պահելուն», եզրափակեց իր խօսքը Արցախի նախագահը:

Արտակ Բեկլարեան շնորհակալութիւն յայտնած է պետութեան եւ ժողովրդին ծառայելու՝ իրեն ընձեռնուած հնարաւորութեան համար:

«Զիմա շատ մեծ մարտահրաւերներ, խնդիրներ ունինք՝ ե՛ւ երկար ժամանակ կուտակուած, ե՛ւ այս ճգնաժամով պայմանաւորուած: Ես իրօք լիայոյս եմ, որ պարուն վարդանանայի առաքելութիւնը յաջողութեամբ պիտի պսակուի: Ես եւ մեր միւս գործընկերները պատրաստ ենք կանգնելու պարուն Վարդանանայի կողքին, որպէսզի համատեղ անկէ մեծ մասշտաբի յաջողութիւններ արձանագրենք», նշած է ան:

Ռուբեն Վարդանեան ընդգծած է, որ իրեն համար մեծ պատիւ ու շատ անկէ մեծ պատասխանատուութիւն է այս պահին ստանձնել Արցախի պետական նախարարի պաշտօնը:

«Այդ որոշումը կայացուցած եմ՝ գիտակցելով ստեղծուած իրավիճակին ամբողջ լրջութիւնը: Մենք պէտք է հասկանանք, որ հիմա մեզի համար հայրենական պատերազմ է, ճգնաժամային իրավիճակ, որ բոլորէս պիտի պահանջէ ուժերու, ջանքերու ներդրում, որպէսզի Արցախը ունենայ իր անվտանգութիւնը, անձնականութիւնն ու զարգացումը: Եթէ մենք այդ չգիտակցենք եւ չընենք ամէն ինչ այս նպատակին հասնելու համար, կը նշանակէ՝ մենք մեր պարտքը, որպէս փորձ ու հնարաւորութիւններ ունեցող մարդիկ, չենք կատարել մեր ժողովուրդին առջեւ:

Երկու ամիս է այստեղ կը գտնուիմ, շատ մարդոց հետ հանդիպած եմ ե՛ւ գիւղերուն մէջ, ե՛ւ երիտասարդութեան հետ, ե՛ւ կառավարութեան անդամներուն հետ, ե՛ւ Ազգային ժողովին մէջ, ե՛ւ տարբեր գործիչներու հետ: Գուցէ չէք գգար, բայց կ'ուզեմ ըսել, որ արցախցիները բոլորին համար օրինակ են այս առումով, որ չնայած այս ծանր իրավիճակին՝ կը մասն այստեղ, կ'ապրին, գաւակներ կ'ունենան: Եւ ես հպարտ եմ, որ կանգնած եմ ձեր կողքին, որպէսզի բոլորս ծառայենք, գործենք մեր հայրենիքը պահելու համար, որպէսզի ունենանք փայլուն ապագայ: Մենք Արցախը ստացած ենք մեր նախնիներէն եւ պարտաւոր ենք զայն փոխանցել հայութեան յաջորդ սերունդներուն», ըսած է Ռուբեն Վարդանեան:

«ՄԻՊ-Ն ՈՒ ԱԶԱՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՆԱԽԱԳԱՔԸ ՄՏՈՐԱԳՐԱԾ ԵՆ
ՅՈՒՇԱԳԻՐ՝ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԻ
ԳԷՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՋ ԶԱՆՔԵՐԸ
ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ


33 Մարդու իրաւունքներու պաշտպան Քրիսթինէ Գրիգորեան եւ «Ազատական քաղաքականութեան հիմնարկ» հասարակական կազմակերպութեան նախագահ Տարեւիկ Մատինեանը ստորագրած են համագործակցութեան յուշագիր, ըստ որուն՝ պայմանաւորուած են իրականացնել «Ատելութեան խօսքի դէմ պայքար» յանուն ժողովրդավարական հասարակութեան մէջ բազմակարծութեան եւ հանդուրժողականութեան հաստատման» ծրագիրը, որ կը ֆինանսավորուի Զոլանտայի կառավարութեան կողմէ:



Յուշագրի ստորագրման ներկայ եղած է Հայաստանի մէջ Զոլանտայի դեսպան Սիլվիա Միտրոմերց:

Յուշագիրը ստորագրուած է՝ հաշուի առնելով ինչպէս Հայաստանի, այնպէս ալ աշխարհի մէջ անհանգստացող արագութեամբ ատելութեան խօսքի ծաւալման փաստը, ներառելով լրատուութեամբ ու համացանցային այլ միջոցներով: Կողմերը համաձայնած են, որ ատելութեան խօսքը կրնայ ունենալ չափազանց ծանր հետեւանքներ նման խօսքով թիրախաւորուած անձերու, խումբերու եւ ընդհանուր առմամբ՝ հասարակութեան համար:

Պաշտպան Գրիգորեանը շնորհակալութիւն յայտնած է դեսպան Սիլվիա Միտրոմերցին համագործակցութեան համար:



ԱՐԵՄՏԱՐԱՅԵՐԵՆԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՊԱՍՏ

Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը կը մեկնարկէ արդ եւս արեւմտահայերէնով մշակութային ստեղծագործութեան նուիրումով նպաստի ծրագիրին երկրորդ շրջանը: Այս առաջատար ծրագիրին միջոցով Բաժանմունքը պիտի շարունակէ աջակցիլ հայերէնով ժամանակակից մշակոյթի եւ մտածողութեան ստեղծող նախաձեռնութիւններուն: «Արդ եւս»-ի նպատակն է ոգեշնչել, նպաստել եւ աջակցիլ մշակութային եւ ստեղծագործական ոլորտներու նորարարութեան եւ ժամանակակցութեան՝ ապահովելու արեւմտահայ լեզուին ու մշակոյթին կենսունակութիւնը, որ սերտօրէն կապուած է նաեւ եկող սերունդներու կենսունակութեան:

Որպէս ընկերային վերափոխումի գործիք, մշակոյթը կ'առնէ կերտնական դիրք մը: Այս առումով, «Արդ եւս» կ'աջակցի նաեւ մշակութային մեր իրականութեան մէջ իսկական փոփոխութիւն բերող ազդու գործիչներու: «Արդ եւս» կը ձգտի ներշնչելու մարդիկ եւ համայնքներ, որպէսզի անոնք փորձընկալեն, վերափոխաւորեն եւ տարածեն մշակութային գաղափարներու մշակութային կիրառումով. գաղափարներ որոնք կը մղեն պատկերացնելու արեւմտահայերէնի եւ արեւմտահայ մշակոյթի կենսունակ ապագան, եւ ապահովելու անոր տեղը ընդհանրապէս ժամանակակից մշակոյթին մէջ: Ծրագիրին նպատակն է աջակցիլ գեղարուեստական նախաձեռնութիւններու, որոնք կը «խախտեն» ներկայի լծացած իրականութիւնները եւ վերատեսութեան կ'ենթարկեն գանձու, խթանելով այլընտրանքային կենսունակ ապագայի մը գոյացումը:

Մշակութային եւ ստեղծագործական կալուածները նորարարական եզակի կարողականութիւն եւ փոխակերպող ուժ կը պարունակեն, եւ կը նպաստեն ընկերային բարեփոխումներու: Ընկերային ազդեցիկ գաղափարները միշտ ներկայ են ապագայահայեաց մշակութային ստեղծագործութիւններու մէջ, իսկ ընկերային ներգրաւուածութիւնը [եզուի] միջոցով կրնայ մարմնավորուիլ բազմաթիւ գիտակարգերու ընդմէջէն. հետեւաբար, «Արդ եւս» կ'ընդունի մշակութային ծանօթ բոլոր ձեւաչափերով նախաձեռնող հիմունքներ, ուր արեւմտահայերէնը է արարումի եւ ստեղծագործութեան հիմնական միջոցը:

Յատկապէս տեղեկութիւններու համար այցելել նպաստի էքը եւ կարդալ դիմումներու յայտ փաստաթուղթը:
<https://gulbenkian.pt/armenian-communities/hy/>

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

ՊՏՈՅՏ
ԵՐԵՒԱՆՈՒՄ
 (շարունակութիւն)

*Ասում են կարօտը խօսել չգիտի,
 Բայց իմ կարօտը արտասուել գիտի...
 Ասում են կարօտը զգալ չգիտի,
 Բայց իմ կարօտը համբերել գիտի,
 Նա ներել գիտի ու սիրել գիտի,
 Ամէն մի բանը ու ամէն տառը
 Նա յամառօրէն վերլուծել գիտի...
 Բայց ես էլ կ'ամեն,
 Որ իմ կարօտը, տանջուել գիտի...*

Պ. ՄԵՐԱԿ

Ասում են Հայաստանը չքունու ենթակայ՝ անդունդի եզրին է՞, բայց այլ է իրականութիւնը, եթէ նոյնիսկ մեր չարաբաստիկ հարեւանների անորոշակի համեմատ ինչ որ վտանգ նախատեսելի է, միայն թէ հայրենի պետական այրերը պէտք է գիտենան դիմակայել մարտահրաւերներին եւ կարծում են այդ ուղղութեամբ հնարաւոր ջանք չի ինչպէս ճիշդ քայլեր անելու. թերեւս ամէն ինչ մեր ցանկութեամբ չի կարող լինել: Սակայն եւ երկրները, որ իրենց ուզածի պէս են ընտրում սեփական վիճակը:

Արդէն մամուլը լայնօրէն տեղեկացնում է, թշնամու պարբերաբար իրագործած հրադադարի խախտումների մասին սահմանամերձ տարածում, բայց երեւաւոր խուճապի նշոյլ անգամ չկայ, այն դարձել է սովորական եւ ուշադրութեան չի արժանանում: Երբեւէ երեսնաւի փողոցները այնքան մարդաշատ չեն եղել մեքենաների ու զքօսաշրջիկների ներկայութեամբ, ինչպէս Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին, երբ կենսը եռում էր ամառույ աստիկ տաքութիւնից յետոյ: Առիթ ունեցայ մի քանի ռուսի հետ զրուցել, եւ բոլորը հիացած էին մեր բազում ճաշատեսակների բուրմունքից ու համից, երկրի բնական պայմաններից, որ հասկանալի է տափակ միալար հսկայական տարածքների վարժ մարդիկ տեսնում էին լեռնային բազմաթիւ տեսարաններ եւ Մասիս սարս իր աննախադէպ տեսարանով, իսկ նրանցից մէկը, նոյնիսկ իր գաւակին բերել էր Դիլիջանի միջազգային դպրոցում գրանցելու, քանզի այդ դպրոցի դաստիարակման եւ ուսման համբաւը լայն տարածում ունի, որ մեզ համար հպարտանալու տեղիք է տալիս, միայն թէ, այն ելքի դուռ կարող է դառնալ մեր «անփորձ ուղեղների» արտագաղթի առումով, եթէ մերոնք կարողանան գերծ չմալ գայթակցութիւնից եւ օտարամու զգացումներից:

Անհնար է չնկատել՝ արդի երեսնեան պայմաններում թատերական ներկայացումների հարուստ եւ առատ առկայութիւնը, օփերան ներառելով, բազում նախաձեռնումներ, որոնց կողքին կամերային թատրոնը կարողացել էր բեմ հանել երաժշտական դպրոցների սաներին, որոնք ճիգ էին ինչպէս լաւագոյնների շարքին դասուելու, որ շնորհակալ, քաջալերիչ եւ օգտակար երէնոյ է:

Մէկ այլ հաճելի երէնոյ է գրքի շնորհահանդէսին լայն տարածումը, որ լինում են թէ՛ տեղացի եւ թէ՛ սփիւռքահայ հեղինակների լոյս տեսած գրքերի առիթով: Այդպէս էր, որ ներկայ գտնուեցի, Յորդանան բնակուող մտաւորական Թադէոս Եսայեանի՝ բանաստեղծութիւնների «ԸՆՏՐԱՆԻ ԲԵՐԶԱՐԿԱԿԸ» գրքի շնորհահանդէսին՝ բարեհաճ կազմակերպութեամբ Շաքէ Մանկասարեանի, Թէքէեան կեդրոնի մէջ, ուր նաեւ առիթ ունեցայ իմ խօսքը արտայայտելու տեղացի թէ՛ Սփիւռքից ժամանած ջերմ եւ զգայուն գրաւթ մտաւոր հասարակութեան ներկայութեամբ:

Տեղի է լռութեան չմտնել նման մի այլ երէկոյ՝ կապուած իմ հեղինակած «ՄԵՐ ԽՈՒՆԵՐԻ ԴՅՏ» գրքի տպագրութեան առիթով՝ Լուսինէ Չաքարեան տուն-թանգարանի սրահում, մեզուի ժրաջանութեամբ տնօրէն Սուսաննա Դաւթեանի նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, որին մեր երախտագիտութիւնն ու կատարել գոհունակութիւն ենք յայտնում: Այի ք երեսն էի, թէ ինչպէս նրբամարմին այդ կիներ կարողացաւ մի քանի օրուայ ընթացքին ի մի բերել հայրենաբնակ թէ՛ սփիւռքահայ գրասէլ մտաւորականների՝ մօտ 50-ի չափ, որոնք շարքին թղթակցիւցներ, երգի արհեստավարժ կատարողներ են ասումնաբոլոր: Ամենքը կարողացան իրենց ազատ կարծիքը յայտնել, միւսէն իսկ բուն նիւթից շեղուելով երկրում տիրող վիճակը մեկնաբանելով: Պարզ է որ շարքային քաղաքացիները արդէն ծանկնաջել է որեւէ դատարի գաղափարախօսութիւնից կամ վարկանիշից զուրկ ցուցարարների սին խօսքից եւ ամէն ոք սրտի վրայ կուտակուած բեռից ազատուելու կամ լիցքաթափուելու կարիք ունի, մասնաւոր գինեծօծի գաւառի ընթացքին:

Աւելորդ չեմ համարում նշել եւ ընդգծել, որ «Լուսինէ Չաքարեան» տուն-թանգարանը իր տնօրէնի շնորհիւ նոր վերելք է ապրում, նոր տունն ու հողի է մտել չորս պատերից ներս, երբ ամէն տարիքի բազում այցելութիւններ առիթ են ունենում պարբերաբար ունկնդրել նախկին տանտիրոջ ծայրագրութեան անզուգական ելեւէջները: Փառք ու պատիւ:

Իւրայատուկ կառոյց է մեր երկրի հասարակութիւնը, ինչպէս այլ երկրներում: Այն բազմաբովանդակ է եւ բազմաշերտ: Բարձրակարգ մտաւորականի կողքին կան յղիաքան կիսագրագետ միջակութիւններ՝ Բաճճիի Զաւոր Պետրոսի հոգեբանութեամբ, որ յաճախ ընտրութիւն ընտրութիւն կամ «քիզնեսի» միջավայր, նաեւ պետական աթոռի, որոնք «սրբութեան սրբոց»ը կեդն ու սուտն է եւ դրամի գոյնից գատ այլ երանգ չեն ճանաչում, բայց յաջողում են երբեմն բարձր դիրքերի տիրանալ իրենց մակարանոյթի բնոյթով: Կա նաեւ իր իւրի մէջ տապկուող լայն հասարակութիւնը, որ քարչ է տալիս իր ճակատագրի համաձայն ունեցած վիճակը եւ սպասում հրաշքերի մի աչքը յառած արտագաղթի ճանապարհին, որ յաճախ ընտրութիւն է, այլ՝ հետեւանք: Մինչ այդ թշնամին հիւսում է իր սարդոստայնը, իսկ մերոնք իրար յօշոտելու նորանոր ծրագրեր են յղանում: Վերջին 30 տարուան ընթացքին ոչ մէկ համաբայական հաւաքունք չի եղել, որ կլոր սեղանի շուրջը նստին երկրի ու սփիւռքի բանիմաց անձիք խելք-խելք տալով, թէ մեզ համար ի՞նչ ուղիներ կան ծառայած մարտահրաւերներին անսխալ դիմակայելու: Մինչդէռ նախիւ են երկիր փրկող ու դաս ուսուողները՝ տիրուած ուսուանների կողքին, որոնցից փրկուելու միակ ուղին համազգայնօրէն սթափուելն է, որ ուշանում է ցաւօք:

ՌՈՒՔԵՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
 ՄԵՆ ՌԱՖԱՅԵԼ
 «Այդ է գուճում հայրենի գրաւոր թէ բանաւոր ընդդիմադիր մամուլը, սեն ու ճերմակը իրար խառնելով:



ԼԻՔԱՆԱՆՑԻ ՄՏԱԽՐԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՊԱՅԾԱՌ ԴԵՄԶ՝ ՊՈՒԹՐՈՍ ԱԼ ՊՈՒՄԹԱՆԻ

(1819-1883)

Տասնիններորդ դարու Լիբանանի ամենափայլուն գաւակներէն: Փիլիսոփայ, արձակագիր եւ կրթական մշակ: Ան մեծ դեր կատարեց Եգիպտոսի մէջ սկսած վերածնունդի գաղափարները Լիբանանի եւ Սուրիոյ մէջ տարածելու համար:



Արաբական իշխանութեան անկումէն ետք 1258 թուականին, Արեւելքը սկսաւ կամայական կամայ մարտնչել տգիտութեան ճահիճին մէջ: Մեմփոսէտի եւ Օսմանեան պետութեան իշխանութեան ժամանակաշրջանին՝ 1300-էն 1516 եւ 1516-էն 1918, Արեւելքը ականատես դարձաւ տգիտ վարչակարգերու իշխանութեան: Միակ պայծառ կետերը Լիբանանի իշխանութեան կիսանկախ դիմակն էր Ֆարաբուտիսն եւ Ալ Շեհապ ընտանիքներու իշխանութեան ժամանակաշրջանին եւ ամերիկեան ու ֆրանսական միսիոնարական շարժումներու հաստատած համալսարանները 1862 թուականէն սկսեալ:

Պութրոս ծնած է մարտի 4-ին Ալ Պութրանի ծանօթ ընտանիքի յարկին տակ, Լեռնալիբանանի Շուֆ գաւառի Տըպաիէ գիւղին մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է գիւղի վարժարանին մէջ, ուր գրաւած է ուսուցիչ հայր Միխայիլ Ալ Պութրանի ուշադրութիւնը որպէս ուշիմ աշակերտ մը: Այս վերջինը առաջարկած է Սայտայի եւ Շուֆի առաջնորդ Ապտալլա Ալ Պութրանիին՝ երիտասարդին տալ բարձրագոյն ուսում: Այն ատեն դպրոցները մատի վրայ կը համրուէին: Եպիսկոպոսը պատանի Պութրոսը ուղարկած է Քեսրուանի Ղոսթա գիւղին մէջ գտնուող «Այն Ալ Ուարաքա» նշանաւոր դպրոցը: Այս դպրոցին մէջ ան մնաց տասը տարի, ուր սորվեցաւ սիրիականերէն, լատիներէն, ֆրանսերէն, անգլերէն եւ իտալերէն:

1840 թուականին, աւարտելէ ետք «Այն Ալ Ուարաքա» վարժարանը կը վերադառնայ Պէյրութ, ուր կը ստանձնէ իր առաջին պաշտօնը, որպէս թարգմանիչ բրիտանական ուժերու գրասենեակին մէջ: Անոնք Լիբանան կը գտնուին Օսմանեան պետութեան օգնելու՝ Եգիպտոսի Իպրահիմ Փաշան Սուրիայէն հեռացնելու համար: Ապա ան ամերիկացի բողոքականներու առաքելութեան մօտ գործի անցաւ: Մինչեւ իր մահը՝ 1883 թուականին, մնաց բողոքականներու մօտ եւ անոնց ազդեցութիւնը այնքան մեծ էր իր վրայ, որպէս հաւասարակշռուած եւ լայնախոյ մարդիկ, որ Ալ Պութրանի ընդունեց բողոքականութիւնը: Ան պատրաստեց արաբերէն քերականութեան եւ թուաբանութեան դասագիրքեր լիբանանցի եւ սուրիացի ուսանողներու համար: Ան արաբերէնի թարգմանած է նաեւ Վան Տայքի Անտարանը: Այս մէկը կը համարուի իր գլուխգործոցներէն մէկը: Այս գործին մէջ նաեւ մեծ դեր ունեցաւ Նասիֆ Ալ Եագիթին, այդ ժամանակաշրջանի ուրիշ հզօր մտաւորական մը: Ալ Պութրանի եւ Ալ Եագիթին մեծ դեր կատարեցին Լիբանանի մէջ մշակութային վերածնունդի հիմերը դնելու համար:

Ալ Պութրանի թէեւ տպաւորուած էր ամերիկացի բողոքականներու կրթական մակարդակէն եւ ձեւէն, սակայն ան միշտ կը հաւատար, որ Արեւելքի գաւակները կրթական ուրոյն համակարգի մը կ'էտք ունին: 1859-ին խօսուած իր ճանքերէն մէկուն մէջ ան կը նշուի որպէս արաբերէնով գրաւանութիւն ստեղծելու: Ալ Պութրանի իսկական տաղանդը ի յայտ եկաւ, երբ ան դուրս ելլելով մինչեւ այն ատեն տիրապետող կրօնական կրթական համակարգէն, ուղղուեցաւ դէպի լայիք կրթական համակարգ: Այս է որ հիմը դրաւ արաբական վերածնունդի շարժումին: Կրթութիւնը չունէր կրօնը, այլ կը պատկանէր սուրիացի եւ լիբանանցի ժողովուրդներուն, անկախ անոնց կրօնական պատկանելիութենէն:

1863 թուականին Պէյրութի մէջ հիմնեց «Ալ Մատրասա Ալ Ուարանիյա», ուր սկսաւ գործադրել իր լայիք դասաւանդումի ծրագիրը: Դպրոցը ուներ ապակրօնական, ազգային ուղղութիւն: Այս էր պատճառը, որ 1878-ին դպրոցը փակել տուին՝ կրօնական ազդեցութեան զօրանալուն պատճառով: Ան արաբականութեան ռաիփրաններէն էր եւ յարգուած անձնաւորութիւն մը: Պութրոս Ալ Պութրանի միշտ պիտի իշխուի որպէս Լիբանանի եւ արաբական աշխարհի ազգային փայլուն դէմքերէն, որոնց համար արաբ մարդը պէտք է վերականգնէ իր մշակութային հզօրութիւնը, անկախ իր դաւանանքէն:

ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԼԵԿՏՐՈԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՏԱԴՐՈՂ ՊԱՏՈՒՅԱՆՆԵՐ

ԱՄՆ-ի «Միչիկըն» համալսարանէն խումբ մը հետազօտող գիտնականներ կը պատճառեն թափանցիկ նիւթ մը, որ պիտի փոխարինէ արեւն ու պայակրօնականութիւն արտադրող սիլիքոնը:

Սիլիքոնը թափանցիկ նիւթ չէ եւ չի կրնար օգտագործուիլ պատառահաններու ապակիին փոխարէն: Ուրեմն, գիտնականներ սկսան փնտռել նիւթ մը, որ բնածուրկ կամ քարայրի վրայ հիմնուած է: Հիմնական հարցը այս նիւթին դիմացկունութիւնն էր սիլիքոնի նման, որպէսզի երկար ժամանակ դիմանայ: Գիտնականներ գտան լուծումը: Այդ նիւթը՝ Non-fullerene կ'ազդուի անդրմանիշակազոյն ճառագայթներէ: Ուրեմն, այս նիւթը եթէ ծածկուի զինք-օքսայոյ խառով մը՝ կը պաշտպանուի այդ ճառագայթներէն եւ կը դիմանայ երկար ժամանակ: Այսպիսով կ'ունենանք թափանցիկ, ապակիի նմանող, ելեկտրականութիւն արտադրող պատառահաններ:

Աղբիւր՝ «Սայընս Տէյլի»

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻ՞՞

Ճ. ՄԱՍ

ՊԻՒՍ ԱԼ ՇԱՄ ԿԱՍ ՄԵՏԸ ՍՈՒՐԻԱ

Սուրիան կը համարուի ռազմավարական դիրք ունեցող պետութիւն: Սուրիոյ տիրոջը կրնայ հսկել արեւելեան Միջերկրականի շրջանէն մինչեւ Աֆղանիստան երկարող շրջանը: Սուրիա աշխարհագրականօրէն կը բաղկանայ Միջերկրական ծովուն նայող ծովագերբէն, համակոսի հովիտէն եւ մինչեւ Յորդանանի սահման երկարող շրջանէն, հիւսիսային Սուրիայէն, որ կ'երկարի Հալէպէն մինչեւ Հասաբէ երկարող շրջանը եւ սուրիական անապատէն մինչեւ Տեր Զօր:



2011 թուականին, «Իսլամ եղբայրներ» շարժումը անգամ մը եւս ջուրի երես բարձրացաւ, որովհետեւ Արեւմուտքը պէտք ուներ անոր ծառայութեան, հարուածելու համար Սուրիոյ ազգայնական իշխանութիւնը: Արեւմուտքը արաբական երկիրներու միջոցով, մասնաւոր Քաթարի, Սուրիայէն պահանջեց Տոքէն ելոյ կազմի խողովակը անցնել իր հողերուն վրայէն, հասնելու համար թուրքիա, ապա՝ Երոսպա: Արեւմուտքի համակարգը կ'ուզէր Ռուսիան կամայականօրէն դուրս մղել ուժանիւթի միջազգային շուկայէն, զայն փոխարինելով արաբական ուժանիւթով: Սուրիոյ նախագահը չէր կրնար նեղացնել ռուսերը, որոնք իր կողմէն երկրի ռազմավարական դաշնակիցներն էին: Անգամ մը եւս Սուրիա յայտնուեցաւ Արեւելք-Արեւմուտք բախումի սահմանին վրայ: Երկիրը շատ սուղ գին վճարեց այս որոշումին համար, սակայն միշտ Արեւելքին մէջ եղող Սուրիան չէր կրնար մտնել Արեւմուտքի ճամբարին մէջ: Բազմաբեւեռ աշխարհի առաջին ճակատամարտներէն մէկը մղուած էր Լիբանանի մէջ 2006-ին, Սուրիա երկրորդ փուլն էր: Սուրիոյ մէջ յաղթող կողմը պիտի պարտադրէր իր պայմանները արհմտով կերտուած բազմաբեւեռ աշխարհին մէջ: Այս է պատճառը որ Ռուսիա, Իրան եւ անոնց ետեւէն Հինաստան միջնորդեցան Սուրիոյ պատերազմին մէջ:

(Շարունակելի)

Աղբիւր՝ «Տը Ռիվէն Կֆ Ճիոկրաֆի», Ռոպրոք Զափլան

ԱՍՏՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՕԹԸ ՈԳԻՆԵՐԸ

Ե. ՄԱՍ

Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը հաստատէ հիմները աւելի լաւ հասկնալու համար Ստեղծիչը եւ անոր օրէնքները: Հասկնալու համար այն ուժը, որ Ան կ'օգտագործէ մարդոց տալու համար գերմարդկային կարողութիւններ, որ մարդը ծառայէ մարդուն եւ Արարիչին: Այս սերտութիւնը փորձ մըն է պեղելու համար գերմարդկային աշխարհը, ուր կը տիրէ Աստուծոյ օրէնքը իր եօթը ուժերով:

(Շարունակելի)

Աղբիւր՝ «Տը Ռիվէն Կֆ Ճիոկրաֆի», Ռոպրոք Զափլան

ԱՍՏՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՕԹԸ ՈԳԻՆԵՐԸ

Ե. ՄԱՍ

Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը հաստատէ հիմները աւելի լաւ հասկնալու համար Ստեղծիչը եւ անոր օրէնքները: Հասկնալու համար այն ուժը, որ Ան կ'օգտագործէ մարդոց տալու համար գերմարդկային կարողութիւններ, որ մարդը ծառայէ մարդուն եւ Արարիչին: Այս սերտութիւնը փորձ մըն է պեղելու համար գերմարդկային աշխարհը, ուր կը տիրէ Աստուծոյ օրէնքը իր եօթը ուժերով:

(Շարունակելի)

Աղբիւր՝ «Տը Ռիվէն Կֆ Ճիոկրաֆի», Ռոպրոք Զափլան

ԱՍՏՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՕԹԸ ՈԳԻՆԵՐԸ

Ե. ՄԱՍ

Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը հաստատէ հիմները աւելի լաւ հասկնալու համար Ստեղծիչը եւ անոր օրէնքները: Հասկնալու համար այն ուժը, որ Ան կ'օգտագործէ մարդոց տալու համար գերմարդկային կարողութիւններ, որ մարդը ծառայէ մարդուն եւ Արարիչին: Այս սերտութիւնը փորձ մըն է պեղելու համար գերմարդկային աշխարհը, ուր կը տիրէ Աստուծոյ օրէնքը իր եօթը ուժերով:

(Շարունակելի)

Աղբիւր՝ «Տը Ռիվէն Կֆ Ճիոկրաֆի», Ռոպրոք Զափլան

ՊԱՏՈՒԹԻՒՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԴԱԿԱՆԸ

Ծ. ՄԱՍ

Այս շարքով պիտի շարունակենք ներկայացնել Արեւմտեան Հայաստանի հարցին վերաբերող պատմութեան ծայրերը ու անոնց վերլուծումը: Ներկայացնելէ ետք փանթօրքիզմ շարժումի հիմնադիրները, որոնք մեծամասնութեամբ սինիստ հրեաներ էին, պիտի շարունակենք ներկայացնել, թէ որոնք հովանաւորեցին փանթօրքիզմը եւ ինչ նպատակներու համար:

Բ. Աշխարհամարտի վաղորդայինին, այսինքն «ցուրտ պատերազմ» կոչուող ժամանակաշրջանին, փանթօրքիզմի ծաւալողական ծրագիրը հովանաւորողը եղաւ ամերիկեան իմփերիալիզմը, որ պարագլուխն էր «Ազատ Աշխարհ»-ին եւ իրամանատարը անոր հակախորհրդային պայքարին...: Խորհրդային Միութեան սահմանակից իր ռազմագիտական դիրքով, թուրքիա դարձաւ ոչ միայն ամերիկեան, այլեւ Արեւմուտքի բոլոր իմփերիալիստական երկիրներու շփացած գաւակը՝ Իսրայելիէն անմիջապէս վերջ, կամ՝ անմիջապէս առաջ:

Զարեանը իր «Թուրքիա եւ Փանթօրքիզմը» գիրքին մէջ (որ հրատարակուած է Փարիզ, 1930-ին ֆրանսերէնով, Անտրէ Մանտելշթամի յառաջաբանով եւ Թերենսիի կողմէ) կը գրէ. «Փանթօրքիզմը գլխաւոր թշնամին է Ռուսաստանի: Երուպական այն երկիրները, որոնք բախումի մէջ են Ռուսաստանի հետ, պիտի զօրակազ կանգնին թուրքիոյ փանթօրքական ծրագիրներուն»:

(Շարունակելի)

Աղբիւր՝ «Սիւնիզմի եւ Բանթօրքիզմի Անշնութիւնները», Մերթ Գ. Տրյոնեան, 1990

ԱՌՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ ՀԱԿԱԺԱՐ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄՆ-ի «Զորնէլ» համալսարանէն խումբ մը հետազօտողներ սկսած են սերտել այն բնական հակաժահր (antiviral) համակարգը, որ կը գտնուի մարդուն եւ անասուններու ծիններուն մէջ եւ կը պաշտպանէ զանոնք սոր ժահրերէ:


Հետազօտութիւնը կարելի է, քանի որ հետագայ հետազօտութիւնը կրնայ բացայայտել բնական հակաժահրային սպիտակոցներու (protein) խումբ մը, որ կրնայ օգտագործուիլ սոր ժահրերու դէմ բուժումին մէջ: «Արդիւնքները ցոյց կու տան, որ մարդու ծիններուն մէջ մենք ունինք սպիտակոցներու խումբ, որոնք ներուժ ունին արդիւնք ժահրերու թափանցումը մարդու մարմնին մէջ», կ'ըսէ մասնիկային կենսաբանութեան եւ ծիներու փրոֆեսոր Սետրիք Ֆեշտը:

Աղբիւր՝ [https:// www.sciencedaily.com/](https://www.sciencedaily.com/)

ՄՆԱԿՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՐԴԵՐ Դ. ՄԱՍ

ԱՍՏՈՒՍԻ ԲԵՐԴ

Հայ ժողովուրդի մշակութային ժառանգի ամենամեծ ապացոյցներն են իր կառուցած մեհեանները, եկեղեցիները եւ բերդերը, այլ նշանաւոր կառուցներու կողքին: Այս շար-



քով պիտի շարունակենք ներկայացնել մեր ժողովուրդին կառուցած բերդերը, որոնց մեծ մասը հասած են մինչեւ մեր օրերը: Բերդերը կը կազմեն մեր ժողովուրդի ռազմական մակարդակի ամենամեծ ապացոյցները, անոնք են վկանները, որ մեր ժողովուրդը երբ նեղի մատնուած է թշնամին կողմէ՝ ապականած է իր կառուցած ամրոցներուն: Անոնք եղած են մեր ժողովուրդին պաշտպանները, քաջարի հայ մարտիկներու կողքին:

Բ. Ալարայի բերդ, թրքերէն՝ Alara Kalesi

Կը գտնուի Կիլիկիոյ արեւմտեան սահմանին վրայ: Ան առաջին բերդն էր երկրի արեւմտեան կողմէն:

Հիմնուած է Բիւզանդական պետութեան կողմէ: Ապա անցած է Կիլիկիոյ իշխաններու ազդեցութեան տակ ԺԱ. դարուն: Ան ծառայած է որպէս ամապակներու գործունէութիւնը արգիլող ամրոց, որ կը պաշտպանէր Ալարահան քաղաքի վաճառականներու քարավաններու կեդրոնը: Բերդին պարիսպին ետեւ կայ միջնաբերդը: Միջնաբերդին տակ կայ ջուրի շտեմարան: Այստեղ կը հաւաքուէր անձրեւի ջուրը, պաշարումի ատեն օգտագործուելու համար: Միջնաբերդին մէջ կայ պալատ մը, կայազօր կամ զօրքի մատնու տեղ, եկեղեցի մը, որ մկրտչի վերածնունդ է թագաւորութեան անկումէն ետք եւ բաղնիք մը:

Բերդը, որ Միջերկրական ծովէն 7 քիլոմետր հեռու է եւ կը գտնուի Ալարա գետի արեւելեան ափին վրայ, իսկապէս անառիկ է եւ կը գտնուի բարձր ժայռի մը գագաթը: 1231 թուականին ան կը յանձնուի Ռումի սելջուք տուլթա Ալատտին Թեքուլպատին, երբ իշխանը կ'իմանայ թէ ամբողջ նահանգը անցած է սելճուքներու ձեռքը:

(Շարունակելի)


Աղբիւր՝ «Ուլքիփետիա»

ՆՈՐ ԱՐԴԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒՆՏՈՂԻ ՕԳՏԱԿԱՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Թ. ՄԱՍ

Եթէ կ'ուզէք ծրագիրներ, որոնք կ'աշխատին առանց «install» ընելու, ուրեմն դուք պէտք ունիք այս ծրագիրներուն, որ կրնանք դնել ձեր տիքի վրայ եւ աշխատեցնել առանց «install»-ի, միայն վրան սեղմելով: Ծարունակները սերտել այդ ծրագիրները:

Ուբերորդ ծրագիրն է «On-Screen Ruler»-ը, որ մեզի կու տայ պատահական վրայ երեւցող նկարներու իսկական չա-



փը: Ան կրնայ օգտագործուիլ պատահական չափի հետ գործ ունեցող մարդոց կողմէ: Կայքէջի, պատահական վրայ որեւէ ձեւաւորումի համար օգտագործուող այս ծրագիրը պատահական չափը կու տայ անսխալութեամբ, ինչով կամ փորձելով:

Աղբիւր՝ «www.makeuseof.com»



ԻՐՈՓԱ ԼԻԿԻ ԽԱՐԱԿՆԵՐՈՒ 6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՌՈՍԱ, ԵՌՆԱՅԹԸՏ, ՖԵՅԵՆՈՒՐՏ ԵՒ ՆԱՆԹ ՅԱՂԹԵՅԻՆ

Երոպայի ֆուտբոլի ակումբներու երկրորդ մրցաշարքի՝ Իրոպա Լիգի խմբակներու փուլի վերջին՝ 6-րդ հանգրուանի մրցումներուն, երրորդ խմբակին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Ռոսա»-ն իր դաշտին վրայ յաղթեց 2-րդ դիրքը գրաւող Պուլկարիոյ «Լուտոկորեց»-ին ու գրաւեց 2-րդ դիրքը: Հինգերորդ խմբակին մէջ, 2-րդ դիրքը գրաւող «Ման-



չեսթըր Եունայթըդ»-ը կրցաւ իր դաշտէն դուրս յաղթել առաջատար «Ռեալ Սոսիեդադ»-ին, սակայն պահեց 2-րդ դիրքը: Վեցերորդ խմբակին մէջ, բոլոր խումբերը հաւասարեցան կենտրոնի եւ որոշողը եղաւ կոլերու տարբերութիւնը, ու «Ֆեյենորտ»-ն «Սիտթիլլանտ» գրաւեցին առաջին երկու դիրքերը: Յետեւորդ խմբակին մէջ, 2-րդ դիրքը գրաւող Ատրապետի «Քարայպուկ»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ առաջատար «Ֆրայպուրկ»-ին հետ եւ նահանջեց 3-րդ դիրքը: «Նանթ» միացաւ «Ֆրայպուրկ»-ին յաջորդ փուլին մէջ: Իւրաքանչիւր խմբակէն առաջին դիրքը գրաւողը անցաւ վերջին 16 խումբերու փուլ: Երկրորդ դիրքը գրաւողը փլէյ-օֆ պիտի խաղայ Չեմփիոնզ Լիգի 3-րդ դիրքը գրաւող խումբի մը դէմ: Իսկ 3-րդ դիրքը գրաւող խումբը պիտի մրցի Երոպայի երրորդ մրցաշարքի՝ Իւրոպա Բոնֆըրընս Լիգի խմբակներու երկրորդ դիրքը գրաւած խումբի մը դէմ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Արսենալ (Անգ.) - Չուրիխ (Չուից.) 1-0
- Պոտո/Կլիմթ (Սուր.) - ՓՍՎ Ալտինուկըն (Յու.) 1-2
- Դասաւորում.** 1) Արսենալ 15 կէտ 8-3, 2) ՓՍՎ 13 կէտ 15-4, 3) Պոտո 4 կէտ 5-10, 4) Չուրիխ 3 կէտ 5-16
- Բ. խմբակ.** - Տիւսու Էրեյ (Ուկր.) - Ֆեներպահչէ (Թրք.) 0-2
- Ռեն (Ֆր.) - ԱԷԲ Լառնաքա (Կիպ.) 1-1
- Դասաւորում.** 1) Ֆեներպահչէ 14 կէտ 13-7, 2) Ռեն 12 կէտ 11-8, 3) ԱԷԲ 5 կէտ 7-10, 4) Տիւսու Է. 1 կէտ 5-11
- Գ. խմբակ.** - Ռեալ Պեթիս (Սպ.) - ՅԵԲ Զելսինցի (Ֆին.) 3-0
- Ռոմա (Իտ.) - Լուտոկորեց (Պլ.) 3-1
- Դասաւորում.** 1) Ռեալ Պեթիս 16 կէտ 12-4, 2) Ռոմա 10 կէտ 11-7, 3) Լուտոկորեց 7 կէտ 8-9, 4) ՅԵԲ 1 կէտ 2-13
- Դ. խմբակ.** - Սիտթիլլանտ Պրակա (Փոր.)-Մալմեո (Շուեդ.) 2-1
- Ինփոն ՍԵՆ Կիլուազ (Պլ.) - Ինփոն Պերլին (Գեր.) 0-1
- Դասաւորում.** 1) Ինփոն ՍԵՆ Կիլուազ 13 կէտ 11-7, 2) Ինփոն Պ. 12 կէտ 4-2, 3) Սիտթիլլանտ Պ. 10 կէտ 9-7, 4) Մալմեո 0 կէտ 3-11
- Ե. խմբակ.** - Շերիֆ Թիրասպոլ (Սլու.) - Օմնիա Կիպրոս (Կիպ.) 1-0
- Ռեալ Սոսիեդադ (Սպ.) - Մանչեսթըր Եուն. (Անգ.) 0-1
- Դասաւորում.** 1) Ռեալ Սոսիեդադ 15 կէտ 10-2, 2) Մանչեսթըր Եուն. 15 կէտ 10-3, 3) Շերիֆ 6 կէտ 4-10, 4) Օմնիա 0 կէտ 3-12
- Զ. խմբակ.** - Սիտթիլլանտ (Դան.)-Շթուրմ Կրաց (Աստ.) 2-0
- Ֆեյենորտ Ռոթըր. (Հոլ.) - Լացիո Ռոմա (Իտ.) 1-0
- Դասաւորում.** 1) Ֆեյենորտ 8 կէտ 13-9, 2) Սիտթիլլանտ 8 կէտ 12-8, 3) Լացիո 8 կէտ 9-11, 4) Շթուրմ 8 կէտ 4-10
- Է. խմբակ.** - Օլիմպիակոս (Յուն.) - Նանթ (Ֆր.) 0-2
- Զարայպուկ (Ատր.) - Ֆրայպուրկ (Գեր.) 1-1
- Դասաւորում.** 1) Ֆրայպուրկ 14 կէտ 13-3, 2) Նանթ 9 կէտ 6-11, 3) Զարայպուկ 8 կէտ 9-5, 4) Օլիմպիակոս 2 կէտ 2-11
- Ը. խմբակ.** - Մոնաքո (Ֆր.)-Ռեալ Սթար Պելկրատ (Սրպ.) 4-1
- Թրապանուսի (Թրք.) - Ֆերենցվարոզ (Հնգ.) 1-0
- Դասաւորում.** 1) Ֆերենցվարոզ 10 կէտ 8-9, 2) Մոնաքո 10 կէտ 9-8, 3) Թրապանուսի 9 կէտ 11-9, 4) Ռեալ Սթար 6 կէտ 9-11
- Ռմբարկուներ.** 1) Վ. Օլիվերայ-Սիտթիլլանտ Պրակա 4 կոլ, 2) Ս. Կիմենտե-Ֆեյենորտ 4 կոլ, 3) Ա. Պաքստեթաս-Թրապանուսի 3 կոլ

ԻՐՈՓԱ ԶՈՆՔԸՐԸՆՍ ԼԻԿԻ ԽԱՐԱԿՆԵՐՈՒ 6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՓԻՆԻԿ ԳՐԱԿԵՑ 3-ՐԴ ԴԻՐԸ

Երոպայի ֆուտբոլի ակումբներու երրորդ մրցաշարքի՝ Իրոպա Բոնֆըրընս Լիգի խմբակներու փուլի վերջին՝ 6-րդ հանգրուանի մրցումներուն, երկրորդ խմբակին մէջ, Չալլըրի մաս կազմած՝ 2-րդ դիրքը գրաւող Դանիոյ «Սիլլըպուրկ»-ը իր դաշտին վրայ զինջեցաւ 3-րդ դիրքը գրաւող Պեդրիբայի «Անտորլեթիս»-ին ու նահանջեց 3-րդ դիրքը: Չալլըրի մաս կազմած պահեստայիններու նստարանին վրայ: Դ. խմբակին մէջ, Սարգիս Ադամեանի մաս կազմած՝ 3-րդ դիրքը գրաւող Գերմանիոյ «Զելսինց»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ առաջատար Ֆրանսայի «Լիս»-ին հետ ու մնաց 3-րդ դիրքին վրայ: Սարգիս Ադամեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Ը. խմբակին մէջ, Հայաստանի ախոյեան, 3-րդ դիրքը գրաւող «Փիւնիկ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող Չուլփերիոյ «Պազըլ»-ին դէմ, կրեց իր 4-րդ պարտութիւնը ու մնաց 3-րդ դիրքին վրայ: Կիսապաշտպան Մալէս՝ 17-րդ դիրքը գերմանացի կիսապաշտպան Զատե՝ 29-րդ վայրկեաններուն յառաջ տարին «Պազըլ»-ը, ֆրանսացի Տիւսի Է. Լոյտի փոխանցումներով: Մրցումի 53-րդ վայրկեանին «Պազըլ»-ի յարձակող Լոյտե ստացաւ իր երկրորդ դեղին քարտը: Մրցումի 71-րդ վայրկեանին, փոխարինող պոստիցի յարձակող Եուրիշիչ հաշիւը դարձուց 1-2: Առաջատար «Սլովան»-ը պահեց իր դիրքը նոր յաղթանակով: Տիւսու Բարսելոնան բացակայեցաւ խումբի կազմէն: Իւրաքանչիւր խմբակէն առաջին դիրքը գրաւողը անցաւ վերջին 16 խումբերու փուլ: Երկրորդ դիրքը գրաւողը փլէյ-օֆ պիտի խաղայ Իւրոպա Լիգի 3-րդ դիրքը գրաւող խումբի մը դէմ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Ռիկաս ՖՍ (Լաթ.) - Ֆիորենթինա (Իտ.) 0-3
- Իսթամպուլ Պաշաքէիր (Թրք.) - Հարց (Սլ.) 3-1
- Դասաւորում.** 1) Իսթամպուլ 13 կէտ 14-3, 2) Ֆիորենթինա 13 կէտ 14-6, 3) Հարց 6 կէտ 6-16, 4) Ռիկաս 2 կէտ 2-11
- Բ. խմբակ.** - Սթանուա Պուլկ. (Ռուս.) - Ուեսթ Հեմ Եուն. (Անգ.) 0-3
- Սիլլըպուրկ (Դան.) - Անտորլեթիս (Պլ.) 0-2
- Դասաւորում.** 1) Ուեսթ Հեմ 18 կէտ 13-4, 2) Անտորլեթիս 8 կէտ 6-5, 3) Սիլլըպուրկ 6 կէտ 12-7, 4) Սթանուա 2 կէտ 3-18
- Գ. խմբակ.** - Հափթել ՊՇ (Իսր.) - Աստրիա Կիեննա (Աստ.) 4-0
- Լեխ Փոզնան (Լեհ.) - Կիարեալ (Սպ.) 3-0
- Դասաւորում.** 1) Կիարեալ 13 կէտ 14-9, 2) Լեխ Փոզնան 9 կէտ 12-7, 3) Հափթել 7 կէտ 8-5, 4) Աստրիա 2 կէտ 2-15
- Դ. խմբակ.** - Փարթիզան Պելկրատ (Սրպ.) - Սլովաքո (Չեխ.) 1-1
- ՖՍ Զելս (Գեր.) - Լիս (Ֆր.) 2-2
- Դասաւորում.** 1) Լիս 9 կէտ 8-7, 2) Փարթիզան 9 կէտ 9-7, 3) Զելս 8 կէտ 8-8, 4) Սլովաքո 5 կէտ 8-11
- Ե. խմբակ.** - Ափոլլոն Լիմասոլ (Կիպ.) - Վատուզ (Լիխ.) 1-0
- ԱՉ Ալքամար (Հոլ.) - Տիլսիւր-1 (Ուկր.) 2-1
- Դասաւորում.** 1) ԱՉ 15 կէտ 12-6, 2) Տիլսիւր-1 10 կէտ 9-7, 3) Ափոլլոն 7 կէտ 5-7, 4) Վատուզ 2 կէտ 5-11
- Զ. խմբակ.** - Կենթ (Պլ.) - Մոլտե (Սրբ.) 4-0
- Տիւրկարարտըն (Շուեդ.) - Շեմրոք Ռովըրզ (Իր.) 1-0
- Դասաւորում.** 1) Տիւրկարարտըն 16 կէտ 12-6, 2) Կենթ 8 կէտ 10-6, 3) Մոլտե 7 կէտ 9-10, 4) Շեմրոք Ռովըրզ 2 կէտ 1-10
- Է. խմբակ.** - Սլաւիա Փրակ (Չեխ.) - Սիվասփոր (Թրք.) 1-1
- ՍՖՌ Զլուզ (Ռուս.) - Պալանի (Քու.) 1-0
- Դասաւորում.** 1) Սիվասփոր 11 կէտ 11-7, 2) Զլուզ 10 կէտ 5-5, 3) Սլաւիա 8 կէտ 6-7, 4) Պալանի 4 կէտ 8-11
- Ը. խմբակ.** - Փիւնիկ (Հայ.) - Պազըլ (Չուից.) 1-2
- Տալկիրիս (Լիթ.) - Սլովան Պրաթիսլաւա (Սլով.) 1-2
- Դասաւորում.** 1) Սլովան 11 կէտ 9-7, 2) Պազըլ 11 կէտ 11-9, 3) Փիւնիկ 6 կէտ 8-9, 4) Տալկիրիս 5 կէտ 5-8
- Ռմբարկուներ.** 1) Ա. Տովալիք-Տիլսիւր 5 կոլ, 2) Ալեքս Պայնեա-Կիարեալ 4 կոլ, 3) Ա. Շապիշ-Սլովան 4 կոլ

ԱՅՍՕՐՈՒՄՆ ԻՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
17:30 Ալ Պըրժ (1) - Ալ Ահլա (3)
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
14:00 Արարատ (8) - Նոա Արմավիր (10)
- ԱՆԳԼԻՅՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
17:00 Մանչեսթըր Սիթի (2) - Ֆուլհեմ (7)
- 19:30 Էվըրթըն (12) - Լեյսթըր Սիթի (18)
- ՍՊԱՆԻՅՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
17:15 Ռեալ Վալասոլիս (11) - Էլչէ (20)
- 19:30 Սելթա Վիլո (16) - Օսասունա (7)
- 22:00 Պարսելոնա (2) - Ալմերիա (13)
- ԻՏԱԼԻՅՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
16:00 Էմփոլի (14) - Սասուլո (11)
- 19:00 Աթալանթա (2) - Նափոլի (1)
- 21:45 ԱՍ Միլան (3) - Սիլեսիա (16)
- ԳԵՐՄԱՆԻՅՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
16:30 Պորուսիա Տորթմուն (4) - ՎՖԼ Պոխում (17)
- 16:30 Հերթա Պերլին (14) - Պայըրն Միւնխի (2)
- 19:30 Վերտեր Պրեմըն (8) - Շալքե04 (18)
- ՖՐԱՆՍԱԿՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
18:00 Ամաքսի (19) - Սթրասպուրկ (17)
- 22:00 Անժ (20) - Լանս (2)
- ՓՈՐՏՈՒԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 12-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
20:00 Փորոք (3) - Փաշուս Ֆերրերա (18)
- 22:30 Սիտթիլլանտ Լիզբո (6) - Կիթորիա Կիմարայէ (4)
- ՌՈՒՍԻՅՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
13:00 Սոչի (9) - Սպարտակ Մոսկուա (2)
- 15:30 Չենիթ Ս. Փեթեր. (1) - Կրոնի (7)
- 15:30 Ֆաքէլ Վորնեժ (13) - Բրասնաուար (6)
- 18:00 ԲԿՄԱ Մոսկուա (3) - Լիժնի Լոկոպոտ (12)
- ԼԵՂԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
18:30 Փոկոն Շեցին (3) - Կոնիք Զապրէ (13)
- ԿԻՊՐՈՍԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 10-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
19:00 Անորթոզիս Ֆամակ. (9) - Նեա Սալամիս (7)
- ՍԿՈՎԻՏԻԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
17:00 Սելթիք (1) - Տանտի Եուն. (11)
- ՊՐԱՉԻԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 36-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
20:30 Ֆիլադելֆիա (4) - Սաո Փաուլո (8)
- 00:30 Զորինթիան (5) - Սեարա (17)
- 01:00 Ինթերնասիոնալ (2) - Աթլէթիքո Փարանենսէ (6)
- ՖՈՒԹՍԱՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
19:00 Ֆուրսալ Փրո (4) - Ալ Տանուա Ալ Ռիատի (5)
- 21:00 Շապիպաթ Ալ Նահտա (9) - Ալ Ռապիի (11)
- ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ԷՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ**
01:30 Նի Եորք Նիքս (1) - Պոսթըն Սելթիքս (5)
- 04:00 Ֆիլիքս Սանկ (10) - Փորթլենտ Թրեյլ Պլեյզըրզ (2)
- ԹԵՆԻՍԻ ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍԹԸՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՅԱԿԱՆ**
12:00-Էն սկստւել, «beinsports» կայանէն
- ԹԵՆԻՍԻ ՓԱՐԻՉԻ ՄԱՍԹԸՐԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ**
12:00-Էն սկստւել, «beinsports» կայանէն
- ՄԱՐՏԱՄԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ**
13:30 Տղոց գետնային շարժումներ աւարտ., «beinsports»
15:20 Տղոց նոճկապափեր աւարտ., «beinsports»-Էն
16:45 Տղոց օղակներ աւարտ., «beinsports»-Էն

ԹԵՆԻՍ ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍԹԸՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՅԱԿԱՆ ՍԱՔԵԱՐԻ ԵՒ ՇՎԻՈՆԹԷ ԱՆԿԱՍԵԼԻ

- ԱՄՆ-ի Թեքսաս նահանգի Ֆորթ Ուլըթ քաղաքի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան կիներու թենիսի մասթըրզի աւարտական մրցաշարքի մրցումները: Աշխարհի առաջին ութ կին մարզիկները բաժնուած են երկու խմբակի եւ իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւող մարզիկները պիտի անցնին կիսաւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել երկրորդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները.
- Ա. խմբակ.** Օ. Ճապլեր (Թուն.) - Ճ. Փելկիւա (ԱՄՆ) 1-6, 6-3, 6-3
- Մ. Սաքարի (Յուն.) - Ա. Սապալենքա (Պել.) 6-2, 6-4
- Դասաւորում.** 1) Մ. Սաքարի 2 յաղթ - 0 պարտ, 2) Ա. Սապալենքա 1-1, 3) Օ. Ճապլեր 1-1, 4) Ճ. Փելկիւա 0-2
- Բ. խմբակ.** Տ. Զաքաթիկ (Ռուս.) - Բ. Կոֆ (ԱՄՆ) 7-6 թպ 8-6, 6-3
- Ի. Շվիլնթէ (Լեհ.) - Բ. Կարսիա (Ֆր.) 6-3, 6-2
- Դասաւորում.** 1) Ի. Շվիլնթէ 2 յաղթ - 0 պարտ, 2) Բ. Կարսիա 1-1, 3) Տ. Զաքաթիկ 1-1, 4) Բ. Կոֆ 0-2

ԹԵՆԻՍ ՓԱՐԻՉԻ ՄԱՍԹԸՐԻ ՄՐՅԱԿԱՆ ԽԱՉԱՆՈՎ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ

- Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի թենիսի ակումբի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան տղոց թենիսի մասթըրզի 8-րդ մրցաշարքի մրցումները: Ստորեւ տեսնել 1/8-րդ աւարտական հանգրուանին արձանագրուած արդիւնքները.
- Լ. Ճոզովիչ (8) - Կ. Խաչանով 6-4, 6-1
- Լ. Սիլվեսթր (Բ.) - Բ. Ռուտ (3) 4-6, 6-4, 6-4
- Հ. Ռին - Ա. Ռուպլե (7) 6-4, 7-5
- Այս արդիւնքով, հայազգի թենիսի վարպետ Կարեն Խաչանով հրաժեշտ տուաւ մրցաշարքին, զինչէլ Եորթ թիւ 8 դասուած սերպ Նովակ Զոզովիչին: Թիւ 3 դասուած նորվեկիացի Էստիք Ռուտ եւ թիւ 7 դասուած ռուս Անտրէյ Ռուպլե նաեւ հրաժեշտ տուին:

Մ Ա Ն Ա Ջ Դ

Դոկտ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Ալինա Տազեւան եւ գաւազն՝ Դոկտ. Արեգ Տեր եւ Տիկ. Արա եւ Լեւա Տազեւան եւ գաւազները՝ Լայա եւ Արին Տեր եւ Տիկ. Արի Միեր եւ Ռիթա Տազեւան եւ գաւազները՝ Մանուէլ եւ Սեդրի Աւագ Տազեւան եւ ընտանիք (Կիպրոս) Արաքսի, Աւագ, Սոնիա Տազեւան եւ ընտանիքներ Սիմակ, Վաչիկ, Նորա Տազեւան եւ ընտանիքներ (Հայաստան)

Տեր եւ Տիկ. Յակոբ Գազանճեան եւ գաւազներ (Աւստրալիա)

Եւ համայն Տազեւան, Գազանճեան, Պալպուլաքեան, Կիլվանեւեան, Մանուկեան, Արապաղեան, Տապաղեան, Զեքաթեան, Պերպերեան, Մանճիկեան, Փանճարեան ընտանիքներ եւ ազգականներ կը գուծեն իրենց հօր, մեծօր, հարազատին՝

ՄԱՆՈՒԿ ՏԱԳԵՄԵԱՆԻ

(ՇՆ. Պաղտատ, 1925-ին)

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 3 Նոյեմբեր 2022-ին: Յուշարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 5 Նոյեմբեր 2022, կէսօրէ ետք ժամը 3:30-ին, Համոյ Ա. Գեորգ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պորճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

Յաւակցութիւնները կ'ընդունուին Շաբաթ, յուշարկաւորութենէն ետք, Ս. Գեորգ եկեղեցւոյ սրահը, մինչեւ ժամը 8, ինչպէս նաեւ Կիրակի, առաւօտեան ժամը 11-էն մինչեւ ժամը 8, Նոյն վայրին մէջ:

Փափաքելի է, որ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարուին Համոյ Ա. Գեորգ եկեղեցւոյ:

Այս տխուր առիթով, «Արարատ» օրաթերթի տնօրէնութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար գաւազներուն՝ Դոկտ. Անդրանիկ եւ տիարք Միեր եւ Արա Տազեւաններուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ողբացեալներ ԱՆՆԻ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ մահուան 5-րդ տարելիցին, ՀԵՐՄԻՆԷ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին եւ ԲԵՆԻԱՄԻՆ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ մահուան յիշատակին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Նոյեմբեր 2022-ին, Նոր ՀաճՆոյ Ա. Գեորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ARARAD DAILY NEWSPAPER

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المجربة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة حاسيبس المياعة والنشر (م.م.م.)